

Ա. Մ. Մուրադյան

ՀՈՒՆԱՐԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԵՐՏԱԾ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԸ

V դարի կեսերին, հայ ժողովրդի մշակութային բուռն ծաղկման ու վերելքի շրջանում, գործնական ու տեսական կարևոր նշանակություն էին ստանում քերականական, փիլիսոփայական, ճարտասանական, տրամաբանական գիտելիքները, որոնց կարիքն զգացվում էր բազմաթիվ բնագավառներում: Այդ է պատճառը, որ հունարան դպրոցի անդրանիկ թարգմանությունները եղել են քերականական, ճարտասանական դասագրքեր ու փիլիսոփայական երկեր:

Թարգմանական աշխատանքի ընթացքում հունարան դպրոցի հիմնադիրները նկատել են, որ գիտական-փիլիսոփայական գրականությունը պահանջում էր համապատասխան լեզու և համակարգված կայուն տերմինաբանություն: Մինչդեռ կատարյալ թվացող դասական հայերենը, հակառակ իր ճոխության ու ճկունության, հնարավորություն չունեցավ արտահայտելու մշակված հունարեն լեզվի վերացական բարդ հասկացություններն ու նրանց իմաստային նրբերանգները: Ուստի լեզվին գիտական ճշգրտություն տալու և տերմինաբանության ստեղծման գործը հեշտացնելու նպատակով՝ այս դպրոցի հիմնադիր մատենագիրները կատարել են լեզվական մի շարք նորամուծություններ: Ջանալով հունարենի առավելությունները հաղորդել հայերենին, նրանք առաջին հերթին ընդարձակել են մեր բառակազմական հնարավորությունները:

Դասական հայերենը, բացի ժխտական նախածանցներից, համարյա չի ունեցել նախածանցներ: Հունարան դպրոցի հիմնադիրները հունարենի նմանողությամբ ստեղծել են բազմաթիվ հայերեն նախածանցներ, որոնցից շատերը կայունացել և մտել են մեր լեզվի մեջ իրրև նրա բաղադրուցիչ տարրեր: Այս նորամուծությունը հնարավորություն է տվել հունարան դպրոցի ներկայացուցիչներին ոչ միայն ընդարձակելու մեր լեզվի բառակազմական միջոցները, հարստացնելու մեր բառապաշարը բազմաթիվ կարևոր բառերով, որոնք մինչ այդ չեն եղել կամ անհաջող կազմությամբ են եղել, այլև ստեղծելու հայերենի գիտական տերմինաբանությունը՝ քերականության, փիլիսոփայության, ճարտասանության, տրամաբանության բնագավառներում: Այդ նախածանցներով կազմված տերմիններից շատերը դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը և հաջող կերպով օգտագործվում են մեր օրերում:

Հունարան դպրոցի ստեղծած նախածանցների ամբողջական ցուցակը տալիս է Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ թարգմանիչը:

Ալեքսանդրյան քերականական դպրոցի գլխավոր ներկայացուցիչ՝ Դիոնիսիոս Թրակացին «նախադրություն» սահմանում է որպես բառ, որը նախադրվում է բոլոր խոսքի մասերին թե՛ բարդության և թե՛ բառերի կապակցության մեջ: Այս սահմանումը ճիշտ է հունարենի համար, որտեղ նույն նախադրությունը բարդության մեջ կիրառվում է որպես նախածանց, իսկ բառերի կապակցության մեջ պահպանելով իր բառական նշանակությունն ու բառական անկախությունը, հանդես է գալիս որպես նախդիր կամ նախադրություն, հաճախ նաև որպես մակբայ: Ուստի Թրակացու մոտ «նախադրության» սահմանումն ընդհանուր է թե՛ նախդիր, թե՛ նախադրության և թե՛ նախածանցի համար: Նշելի է, որ նախդիրների ածանցական կիրառությունը բնորոշ է ոչ միայն հունարենին, այլ ընդհանրապես, նախդիր ունեցող լեզուներին:

Դ. Թրակացու քերականության հայ թարգմանիչը հունարեն բնագրի Περί των θεσπείων հատվածի համապատասխան «Յադագս նախադրութեան» բաժնում նույնությամբ պահպանել է Թրակացու սահմանումը. «նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ըն բար-

¹ Προθεσις εστι λεξις προτιθεμένην πρὸ των των τοῦ λόγου μερών ἐν τε συνθεσει καὶ συντάξει. Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեան քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ 30:

² Հունարենում նախդիր-նախադրությունները նախապես եղել են տեղի մակբայներ: Այս իմաստից հետագայում զարգացել են ժամանակի, այնուհետև նաև՝ նպատակի, պատճառի, կերպի և մյուս նշանակությունները: С. И. Соболевский, Древне-греческий язык, Москва, 1948, էջ 273:

դուրսն և բաղդասութեան»³։ Այս սահմանման համաձայն, թարգմանիչը հայերենում ևս «նախադրություն» է համարել և՛ նախդիրը, և՛ նախադրությունը, և՛ նախածանցը։ Սակայն, ինչպես թարգմանության ընթացքում այլ առիթներով, այնպես էլ այս դեպքում, թարգմանիչը ճուշտություն է ոչ թե ստրկական հետևողություն, այլ շրջ ինքնուրույնություն։ Նա ավելացրել է նախադրությունների քանակը. հունարենի 18 նախադրության դիմաց հայերենում թվարկել է 50 «նախադրություն» և 3 նտադրություն։ Նկատի ունենալով հայերեն լեզվի օրինաչափությունները, բաց է թողել նախադրությունների կազմությանը վերաբերյալ մասը, որը հատուկ է հունարենին⁴։

Թարգմանչի թվարկած նախադրությունները հետևյալներն են. ներ, արտ, ատր, ապ, բաց, նր, ին/ըն, բար, բաղ, շար, շաղ, մուշտ, զով, ջոկ, պատ, նախ, կանուխ, վաղ, առ, արդ, վեր, բստ, ընդ, ենթ, ստոր, խուն, ունջ, զկնի, յետ, տար, մատ, յար, ջող, զաւ, թափ, պար, կար, փար, բակ, հիո, թեո, հակ, դեր, փոխ, մակ, քան, գեր, աւել, վասն, չաղազս։ Թարգմանիչը նկատի ունենալով «նախադրություն» ո՛չ թե բառական նշանակությունը, այլ քերականական արժեքը, «նախադրություն» է համարել նաև 3 նտադրություն, որոնք անվանում է «ստորադասք». դրանք են՝ «սակս», որ ունի թե՛ նախադաս, թե՛ նտադաս գործածություն և -կից, -որ-ի վերջածանցները։

Ինչպես նկատելի է, թարգմանչի յուրացրած ընդգրկված են դասական հայերենի մի քանի նախդիրներ՝ առ, բստ, ընդ, որոնք հունարեն հայերենում հանդիպում են թե՛ որպես նախդիր, թե՛ որպես նախածանց⁵։ Որոշ «նախադրություններ», ինչպես՝ ապ, արտ, բաց, գեր, ըն (ը), ներ, որոնք առավելապես կայունացել են իբրև նախածանցներ, այս դպրոցի ներկայացուցիչների կողմից գործածվել են նաև որպես նախդիրներ՝ սեռական, տրական, հայցական, բացառական և ներգոյական հոլովների կազմության համար⁶։

Ընդգրկված են դասական հայերենի մի շարք նախադրություններ՝ յաղազս, վասն, քան, յետ, սակս, զկնի, որոնք (բացի վերջինից, որն ունեցել է նաև մակբայական կիրառություն) հունարեն հայերենում ևս գործածվել են որպես նախադրություն։

Որոշ «նախադրություններ», թեև առավելապես կայունացել են որպես նախածանց, սակայն, միաժամանակ, պահպանելով իրենց բառական նշանակությունն ու բառական անկախությունը, գործածվել են նաև որպես նախադրություն (գեր, յար, ստոր, վեր) կամ որպես մակբայ (գեր, յար, նախ. ստոր, վաղ, վեր)։

Իսկ մի քանի «նախադրություններ», ինչպես՝ արդ, կանուխ, հաստատ, մակբայներ են, որոնք երբեք չեն ունեցել նախադրության կամ նախածանցի կիրառություն։

Մնացյալ «նախադրություններից» շատերը արմատներ են, որոնք հնչյունական կամ իմաստային որոշ փոփոխության ենթարկվելով դարձել են նախածանցներ։ Որոշ արմատներ, թարգմանչի կողմից նախածանց են համարվել, սակայն, իբրև այդպիսին երբեք չեն գործածվել. օր.՝ քափ, աւել, զով7, կար, հիո8, մասն, պատ9 արմատներն ածանցման կամ բարդության մեջ հանդիպում են ոչ իբրև նախածանց, այլ իբրև արմատ։ Մի քանիսը՝ զաւ, թեո, ատր, հավանաբար թարգմանչի սխալ ստուգաբանության հետևանքով, թեև առանձնացվել են իբրև «նախադրություններ», բայց նույնպես չեն ունեցել նախադրության կամ նախածանցի կիրառություն. զաւ

3 Ն. Ա. դ ո ճ ց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ 30։

4 Հունարենում նախադրություններից 6-ը միավանկ են ու չեն փոխակերպվում և 12-ը՝ երկվանկ։ Նույն տեղում, էջ 30։

5 Պրոֆ. Ա. Աբրահամյանը նշում է, որ հայերենում նախդիրները, ոչ միայն հունարեն դպրոցի ժամանակ, այլ դեռ շատ վաղ ժամանակներում ունեցել են ածանցական կիրառություն՝ նա թվում է ածանցավոր մի շարք բառեր, որտեղ նախածանցն այնքան սերտ է ձուլված բառարմատին, որ ածանցումը գրեթե չի դիտակցվում. օրինակ՝ առ-ողջ, դ-առ-ամ, դ-արկ, ընկեր (<ընդ+կեր>), ըմբռնել (<ընդ+բռնել=ընթռնել>ըմբռնել), բստ-անձնել>ստանձնել, յ-ար-գանք, ց-անկ և այլն։ Ա. Աբրահամյան, Դրաբարի ձեռնարկ, Երևան, 1958, էջ 246։

6 Ապ, արտ, բաց՝ բացռ., գեր՝ սեռ., տրկ., հայց., ըն, (ը)՝ տրկ., բաց., ներդ., ներ-գոյական հոլովի նախդիրներ են եղել։

7 Արմատն է գովող ժընկեր, գործակից, զովողակից, զովողիմ բառերի։

8 Հանդիպում է հիո զալ ժպտովի, հիո շրջանակել ժպտել, պտտցնել հարադիր բայերի մեջ շշուրջ՝ նշանակությամբ։

9 Պատել բայի արմատն է, որն ունեցել է 1. պատ, պատնել, 2. շրջապատված տեղ, 3. պտույտ իմաստները. պատ առնուլ, զալ շշրջան անել, պատնել, զալարվել։

նշանակել է «գինու կամ ջրի փարչ, եղի ձևով»։ Քեո-ը հավանաբար թիո «թոխի, թուխը» արմատի ձայնդարձն է, որը կապվել է քևր-ի «պակասավոր, քիչ» իմաստի հետ։ Իսկ ատր-ը «կրակ», որը փոխառություն է պահլավերենից, սխալ ստուգաբանության հետևանքով, հավանաբար, շփոթվել է ատո նախաձեռնի հետ։ Անստույգ բառեր են՝ մուշտ, ունը։ Նախաձեռնությունը էլ էր, որոնք, ընդհանրապես, հունարան դպրոցի կողմից նույնիսկ, շատ սահմանափակ գործածություն են ունեցել։ օր.՝ բակ, բար, խուն, մատ, ջոկ, բոդ և այլն։

Հունարան դպրոցի ստեղծած առավել գործածական ու կայունացած նախաձեռնությունները, իրենց հունարեն համարժեքներով, հետևյալն են.

ապ = απο, απ', αψ'	ներ = εν
առ = προς, προ, επι	շաղ = συν
արտ = εκ, εξ	շար = συν
բաղ = συν (սոյ, սոլ, սոբ, սոբ)	վար = περι, περι
բաց = απο, εκ, εξ	ստոր = υπο
դեր = υπερ	վաղ = προ
դեր = αντι	վեր = αντι, επι, υπερ
ենթ = υπο	տար = παρα, υπα
հակ = αντι	տրամ = δια
հոմ = ομο, συν	փաղ = συν
մակ = επι	փար = περι
յար = παρα, συν	փոխ = μετα, αντι
նախ = προ	լատ, ընդ = κατα

Հունարան դպրոցի թարգմանությունների մեջ հանդիպում են նաև այնպիսի բառեր, որոնք կազմված են երկու նախաձեռնությունից։ օր.՝ առ-արտ-ա-գործեմ—αποστ-εξ-εσχαζομαι, բաղ-ստոր-ա-դուրեթիւն—σολ-κατα-θεσις, հակ-ա-ստոր-ողիլ—αντι-κατα-τηγορεϊται, մակ-շաղ-կապել ներ-հակ, ներ-հակ-ուրիւն, տար-բաղ-մաս և այլն։

Քննելով առավել գործածական ու կենսունակ նախաձեռնությունները

Աղ-։ Դասական հայերենի աղ-ծիտական նախաձեռնությունը, որը հունարան դպրոցի ներկայացուցիչները գործածել են իրրև համարժեք՝ հունարեն απο (απ', αψ') նախդիր-նախաձեռնի, իր բաց, բաց, տար, հեռու նշանակությամբ։ Արտահայտում է նաև ժխտում, բացասություն, վերադարձ, շմտ, ԱՐՏ-, ԲԱՏ-, ՏԱՐ-։

Հունարենում απο նախդիրը գործածվելով սեռական հոլովի հետ, բառին հաղորդում է բացառական հոլովաձևի նշանակություն։ Արտահայտում է տեղի, ժամանակի, միջոցի գաղափարացույց է տալիս ծագում, պատճառ, առիթ, հիմք և այլն¹⁰։

Որպես նախաձեռնություն հաղորդում է հետևյալ նշանակությունները. 1) հեռացում կամ բաժանում, 2) ավարտում, կատարում, 3) հետադարձ շարժում, գործողություն կամ վերադարձ, 4) ժխտում։

Հունարենի հետևողությամբ հայերենում ևս աղ-ը հունարան դպրոցի կողմից օգտագործվել է որպիսի բացառականի նախդիր։ օր.՝ «ապ ումեքէ» (յումեքէ)։

Այս նախաձեռնությունը թարգմանվել ու կազմվել են՝ ապարան, ապարանեմ, ապարանութիւն, ապարնակութիւն, ապադարձութիւն, ապաղէմ, ապալել(կ), ապաստվթ, ապաստցել, ապատեմ, ապատրութիւն, ապացոյց, ապացուցական, ապացուցութիւն և այլն¹¹։

Քերականական տերմիններ՝ ապ-ա-բարց (απο-στροφος), ապ-ա-շնորհենի, ապ-ասուրիւն, ապ-ուսուրիւն (απ-αγορευσις), ապ-երդմնական (απ-ωμοσιχα), ապ-երևութիւն կամ ապ-երդմնութիւն (απο-φασις) և այլն։

ԱՒ-։ Դասական հայերենի առ նախդիրը հունարան դպրոցի կողմից գործածվել է իրրև

¹⁰ Հունարենի նախդիր-նախաձեռնությունների իմաստները բերվում են համաձայն հետևյալ բառարանների. А. Д. Вейсман, Греческо-русский словарь, С. Петербург, 1882. И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, Москва, 1958 և С. И. Соболевский, Древне-греческий язык, Москва, 1948 աշխատություններ։

¹¹ Հոգվածի սահմաններում հնարավորություն չունենալով բերելու հունարան դպրոցի՝ նախաձեռնություններով կերտած ամբողջ բառապաշարը և ցույց տալու յուրաքանչյուր դեպքում նախաձեռնությունների իմաստային համապատասխանությունները հունարենի հետ, բավարարվում ենք թվելով մի քանի օրինակներ։

նախածանց, համապատասխան հուն. $\pi\rho\omicron\varsigma$, երբեմն նաև $\pi\rho\theta$, $\pi\pi$ նախդիր-նախածանցների: Առ-ը որպես նախածանց կիրառվելու դեպքում պահել է նախդրի իր նշանակությունները՝ 1. զոր-
ծողության ուղղում դեպի որևէ մեկը, 2. զործողության կատարում մեկի մոտ կամ մի տեղում,
3. դիմում, 4. դադարում, մի բանի մոտ լինելը կամ գտնվելը, 5. տեղ ժմոտ, սվրա, վրան, առաջ,
առաջը, դիմացը և այլն: Հականիշ՝ ԲԱՑ-:

Արծ նախդիրը հունարենում գործածվելով սեռական, տրական և հայցական հոլովների հետ
արտահայտում է համարյա նույն նշանակությունները՝ ղեկավար, կողմից, մոտ, դիմացը, կողմից,
միջոցով, համեմատությամբ, ցույց է տալիս տեղ, ժամանակ, պատճառ և այլն:

Որպես նախածանց արտահայտում է 1. ուղղություն, 2. ավելացում, լրացում, 3. կցվածու-
թյուն կամ մոտիկություն:

Առ-ով թարգմանվել ու կազմվել են՝ առադրություն, առադրել, առադրություն, առասանեմ,
առասանություն, առասացություն, առասեմ, առարկ, առարկանեմ, առարկեմ, առարկու, առար-
կություն, առերես, առերել, առերուքին, առողյանամ:

Քերականական տերմիններ՝ առաջ-ա-դիր(ք) ($\pi\rho\omicron$ - $\tau\alpha\chi\epsilon\iota\chi\alpha\zeta$), առաջ-ա-դրուրին, առ-ա-
սուրին ($\pi\rho\omicron$ - $\sigma\eta\gamma\omicron\rho\iota\alpha$), առ-ասական ($\pi\rho\omicron$ - σ - $\alpha\gamma\omicron\rho\epsilon\upsilon\tau\epsilon\iota\chi\eta$, $\pi\rho\omicron$ - σ - $\gamma\gamma\omicron\rho\iota\chi\omicron\nu$), առ-ասականաբար, առ-աբա-
կան, առ-աելականաբար, առ-բայություն, առ-ինչունակ ($\pi\rho\omicron$ - $\tau\iota$ $\epsilon\chi\omicron\nu$). իբր-առ-ինչունակ
($\omega\varsigma$ $\pi\rho\omicron$ - $\tau\iota$ $\epsilon\chi\omicron\nu$), առ-օայնել, առ-օեռն ($\mu\alpha\gamma\eta\mu\alpha\tau\omicron\rho\iota\theta\iota\lambda\epsilon\iota$) ($\pi\rho\omicron$ - $\chi\epsilon\iota\rho\omicron\varsigma$ $\alpha\pi\omicron\theta\omicron\sigma\iota\varsigma$), առ-ոգանու-
րին ($\pi\rho\omicron$ - $\omega\delta\iota\alpha$). առ-ովասուրին և այլն:

ԱՐՏ-ը. «Արտաբա» բառի արմատն է ղողուս, դրսում նշանակությամբ: Դասական հայերե-
նում առանձին անգործածական է եղել. օգտագործվել է առա-առ-ա ձևով, որից կազմվել են
արտաբանել, արտաբան, արտաբոյ և այլն: Հունարեն դպրոցի ներկայացուցիչները «արտ» ար-
մատը անջատել են որպես նախածանց, համապատասխան հուն. $\epsilon\chi$, $\epsilon\zeta$ նախդիր-նախածանցի:
Հոմանիշ՝ ԲԱՑ-, ՏԱՐ-, ԱՊ-: Հականիշ՝ ՆԵՐ-:

ԵՃ. $\epsilon\zeta$ նախդիրը գործածվելով սեռական հոլովի հետ, բառին հաղորդում է բացառական
հոլովածին նշանակություն: Արտահայտում է. 1. շարժում (մի տեղից), 2. սկզբնապատճառ,
3. հեռացում, 4. ծագում, 5. անցում մի վիճակից մյուսը:

Որպես նախածանց ցույց է տալիս 1. բաժանում, հեռացում, 2. ավարտում, 3. բարձր
աստիճան, 4. ծագում:

Հունարենի հետևողությամբ առ-ը հունարեն դպրոցի կողմից օգտագործվել է որպես բա-
ցառական հոլովի նախդիր. օր.՝ «արտ որոց» (յորոց), «յարտանուանէ» (յանուանէ), «նար-
տաբայէ» (ի բայէ)¹²:

Արտ-ով թարգմանվել ու կազմվել են՝ արտաբանություն, արտագոչեմ, արտադատեմ, ար-
տադրական, արտադրել, արտադրություն, արտահանություն, արտայայտեմ, արտաշնչեմ, արտա-
շնչություն, արտասահման, արտուղի և այլն:

Քերականական տերմիններ՝ առա-ա-բերական (բան), առա-ա-բերել ($\epsilon\chi$ - $\varphi\epsilon\rho\omega$), առա-
ա-բերություն, առա-ա-բերում:

ԲԱՂ-. Այս արմատը «կից, յար» նշանակությամբ դասական հայերենում առանձին անգոր-
ծածական է եղել: Հին մատենագրության մեջ այն հանդիպում է երկու ձևով՝ բաղալի և բաղ-
բաղալի «կցկցված սուտ պատճառներ, մեղադրանք» նշանակությամբ. այստեղից կազմվել են
բաղել, բաղբաղել, կցկցել, կցկցել:

Հունարեն դպրոցի կողմից բաղ արմատը կիրառվել է իբրև նախածանց, հոմանիշ՝ ՓԱՂ-,
ՇԱՂ-, ՅԱՐ-, ԲԱՐ-, ՓԱՐ-, ՀԱՄ- նախածանցներին, համարժեք՝ հուն. $\sigma\upsilon\nu$ (սսլ, սսլ, սսս, սսս)
նախդիր-նախածանցին:

Տսս նախդիրը հունարենում տրական հոլովի հետ նշանակում է. 1. հետ (մեկի, մի բանի),
2. օգնությամբ, 3. միջոցով, 4. համաձայն, 5. ընթացքում (ժամանակի):

Որպես նախածանց արտահայտում է. 1. զործողության համատեղություն, մասնակցու-
թյուն, 2. հավաքականություն, 3. միաժամանակություն, 4. ավարտվածություն:

Բաղ-ով թարգմանվել ու կազմվել են՝ բաղադրել, բաղադրություն, բաղաձայնություն, բաղ-
դասել, բաղդատել, բաղդոհական, բաղդոհություն, բաղկանալ, բաղկացություն, բաղկացուցիչ,
բաղհալական, բաղհալում և այլն:

Քերականական տերմիններ՝ բաղ-ա-ձայն (սսս- $\varphi\omicron\nu\nu\omicron\nu$), բաղ-բանական(ք) (սսս- $\lambda\omicron\gamma\iota\sigma\tau\iota\chi\omicron\iota$)
բաղ-դատական(ն) ($\tau\alpha$ $\sigma\upsilon\gamma$ - $\chi\rho\iota\sigma\epsilon\omega\varsigma$), բաղ-դատություն (սսս- $\chi\rho\iota\sigma\iota\varsigma$), բաղ-դասություն (սսս- $\tau\alpha\zeta\iota\varsigma$),
բաղ-կապել (սսս- $\delta\epsilon\iota\omega$), բաղ-հիսական(ք) (սսս- $\pi\lambda\epsilon\chi\tau\iota\chi\omicron\iota$), բաղ-մառ(ք) (սսս- $\alpha\pi\tau\iota\chi\omicron\iota$), տար-

¹² Տե՛ս ՆՀԲ, հտ. 1-ին, Վենետիկ, 1836, էջ 375:

բաղ-մսու(ρ) (παρά-συν-απτιχοί), բաղ-յօղ(ρ), բաղ-ա-յօղ(ρ) (συν-αρθροί), բաղ-ասացութիւն կամ բաղ-ստորադրութիւն (συν-καταθεσις):

ԱՅ- կազմվել է «բանալ» բայի արմատից, ըստ Մ. Արեղյանի՝ դասական հայերենի «ի բաց» մակբայից¹³, արտահայտում է ճշնոտ, մի կողմ, բացի, դուրս» իմաստը բացառականի նշանակությամբ: Գրաբարում ի բաց մակբայը զործածվել է բայերի հետ իբրև հարադիր. օր.՝ ի բաց թողու, ի բաց հանել, ի բաց փախել: Հունարան զպրոցի ներկայացուցիչները բազմ- զործածել են որպես նախաձանց, հոմանիշ՝ ԱՊ-, ԱՐՏ-, ՏՆՐ- նախաձանցներին և համարժեք՝ հուն. απο, երբեմն εχ. ες նախդիր նախաձանցներին: Հականիշ՝ ԱՌ-:

Հունարենի հետևողությամբ բաց-ը զործածվել է նաև իբրև բացառական հոլովի նախդիր. օր.՝ «բացասայց» (իբր «ի սայց», «ի սոցանէ»):

Բաց- նախաձանցով թարգմանվել ու կազմվել են՝ բացազայիլ, բացակայ, բացակայութիւն, բացայայտ, բացառութիւն, բացասարար, բացասական, բացասել, բացասութիւն, բացատ, բացատրել, բացերևութիւն, բացորոշութիւն և այլն:

Քերականական տերմիններ՝ բաց-ա-զան-ութիւն (απο-γλήττισ), բաց-ա-տրութիւն (απο-δοσις, απο-δοεσις), բաց-արձակ, բաց-արձակակաւն (απο-λευμενον):

ԳՆԻ՝. Այս արմատը դասական հայերենում զործածվել է միայն զեր ի վերջ ձևով: Հետագայում եղել է հունարան զպրոցի շատ զործածական նախաձանցներից՝ հետևյալ նշանակությու- ներով. 1. վեր, ավելի քան, և 2. բարձր աստիճանի, զերազայն, համապատասխան հուն. υπερ մակբայ-նախդիր-նախաձանցի: Հոմանիշ՝ ՎՆԲ-:

ՍՊԵՐ որպես մակբայ նշանակում է՝ 1. շատ, չափազանց, 2. առավել քան, վերին աս- տիճանի:

Որպես նախդիր սեռական և հայցական հոլովների հետ ցույց է տալիս 1. տեղը, սվերեից, վերևում, վերը, վրան, 2. պատճառ, հետևանք. նշանակում է 3. բարձր, վեր, ավելի, 4. փո- խարեն, 5. մասին, նկատմամբ:

Որպես նախաձանց նշանակում է 1. սահմանից այն կողմը, 2. վեր, վրան, 3. համար, պատ- ճառով, հետևանքով, 4. արտակարգ, չափազանց, 5. զերազանց, ավելի բարձր լինելը:

Հայերենում ևս զեր-ը օգտագործվել է իբրև նախդիր սեռական և հայցական հոլովների հետ՝ «զեր զբաղումս», «զեր օրինացն», «զեր մարդկան», և իբրև մակբայ՝ «զեր ելոց և նու- աստից»:

Այս նախաձանցով թարգմանվել ու կազմվել են՝ զերազայ, զերազայն, զերազայութիւն, զե- րազրական, զերազրեմ, զերազրութիւն, զերազանց, զերերջանիկ, զերերդարձակ, զերիմաստ, զերիմաց, զերունակ և այլն:

Քերականական տերմիններ՝ զեր-ա-դրական (υπερ-θετικόν), զեր-ա-կատար (υπερ-συντε- λεικος):

ԴՆԲ՝. Դասական հայերենում որևէ ձևով չի հանդիպում. այն ստեղծել են հունարան զբա- րոցի ներկայացուցիչները «փոխանակ, տեղը» և «սուտ, ընդդեմ, ներհակ, հակառակ» նշանա- կություներով, համապատասխան հուն. αντι նախդիր-նախաձանցի: Հոմանիշ՝ ՓՈՆ-, ԹՈՒ (ԹԵՐ-), հմմտ. նաև ՀԱԿ-:

ՎՆԴ նախդիրը սեռական հոլովի հետ նշանակում է 1. փոխանակ, փոխարեն (մեկի, մի բանի), 2. համար, 3. հետևանքով, 4. համեմատությամբ, 5. բացառությամբ:

Որպես նախաձանց արտահայտում է՝ 1. հակադրություն, 2. հակազդեցություն, 3. թշնա- մություն, 4. փոխադարձություն, 5. փոխարինում, 6. հավասարություն:

Դեր- նախաձանցը սահմանափակ զործածություն է ունեցել. կազմվել են մի քանի բառեր, ինչպես՝ զերհաստուցական, զերհատուցումն, զերհիստիսական:

Քերականական տերմիններ՝ զեր-անուն (αντ-ωνυμ), զեր-անունութիւն (αντ-ωνυμ:α, αντ-ωνυμασις), զեր-հատուցական (αντ-αποδοτικος): Հետագայում զեր-ը ստացել է «մեկի արած կամ անելիք բանը» նշանակությու- նը, որից կազմվել են զերասան, զերակատար, զերաբա- ժանում և այլն. այս արմատից է կազմված զեր-բայ քերականական տերմինը:

ԵՆԹ՝. Դասական հայերենում այն չի հանդիպում: Կազմվել է հունարան զպրոցի կողմից «տակը» նշանակությամբ, իբրև հոմանիշ՝ ՊՆԴ-, ՍՏՈՐ- նախաձանցների, համապատասխան հուն. υπο մակբայ-նախդիր-նախաձանցի:

ՎՊՈ -ն որպես մակբայ նշանակում է՝ աներբում, ցածում, տակից, ներքևից:

Որպես նախդիր սեռ. և տրկ. հոլովների հետ ունի հետևյալ իմաստները. 1. տակից, 2. տակը- 3. ստորոտում, 4. հպատակության տակ և այլն:

¹³ ՏՆՐ՝ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 214:

Որպես նախածանց արտահայտում է հետևյալ գաղափարները. 1. տեղ (ներքև, տակ), 2. ստորադասություն, 3. աննկատելիություն, աստիճանականություն, 4. որակի թուլացում կամ մոտավորություն:

Ենթ-ով թարգմանվել ու կազմվել են՝ ենթագրեմ, ենթադատարար, ենթադատություն, ենթադրանք, ենթադրեմ, ենթադրություն, ենթակայ, ենթակայական, ենթակայանամ, ենթակայացուցանեմ, ենթակայություն, ենթացուցանեմ և այլն:

Քերականական տերմիններ՝ ենթ-ա-դատություն (υπο-χρῆσις), ենթ-ա-կէտ (υπο-διαστολή), ենթ-ա-մնական կամ ենթ-ա-մնայական (υπο-μενος), ենթ-ա-մնայ կամ ենթ-ա-մայն (υφ-εν), ենթ-անկեալ (υπο-χειμενος):

Վերոհիշյալ բառերից մի քանիսը ենթ-ի փոխարեն գրված են ընթ-ով, որը հանդիսանում է ենթ- նախածանցի և ընդ նախդրի միջին ձևը և ընդ-ի բարրառային տարբերակը. օր.՝ ընթադրել, ընթադրություն, ընթակայ, ընթակայություն:

ՀԱԿ-. Այս արմատով դասակարգված են հայերենում կազմվել են բազմաթիվ բառեր. ինչպես՝ հակիլի ժմի կողմ թեքվել, միտել, հակառակ թղթմ, ընդդեմ, ներհակ, հակառակել, հակառակ-կողմ, հակառակություն: Հունարան հայերենում հակ-ը դարձել է շատ գործածական նախածանց՝ թհակառակ նշանակությամբ, համապատասխան հուն. αντι նախդիր-նախածանցի: Հմմտ. Գեորգի Նախկինի՝ ՀԱՄ-:

Հակ- նախածանցով թարգմանվել ու կազմվել են՝ հակադարձություն, հակադրեմ, հակադրություն, հակակայ, հակակայություն, հակակիր, հակակշիռ գոյ, հակաճառեմ, հակաճառություն, հակամարտ, հակամէտ, հակորոշումն և այլն:

ՀԱՄ-, ՀՈՄ-. Համ-ը դասական հայերենում եղել է նախածանց և ունեցել է մի շարք իմաստներ. 1. նման, նույն, միևնույն. ինչպես՝ համազգի, համազօր, համալեզու, համախօս. 2. համայն, ամեն կողմը, բոլորը, ամբողջ. օր.՝ համատարած, համօրէն, 3. ամբողջովին, բոլորովին, շատ. օր.՝ համալսել, համարձակ. 4. գործածվել է նաև իբր թարմատար՝ համարբ-ձումն, համբերել, համբերություն:

Հունարան դպրոցի ներկայացուցիչները հունարեն ομο-ի համաձայն, օգտագործել են հոմ- ձևը՝ ռնույն, նման, ամբողջ և ամիսին, միատեղ՝ նշանակությամբ: 'Ομοσ նշանակում է 1. նույն, միևնույն, հավասար. 2. ընդհանուր, մեկտեղ. 3. փոխադարձ. 4. համաձայն, համե-բաշխ, համամիտ:

Հետդասական շրջանում համ-ը համապատասխանել է ομο և συ նախածանցներին:

Համ-ով (ομο-ի համապատասխան) թարգմանվել ու կազմվել են՝ համարան, համարանու-թիւն, համարարարու, համազաղափար, համագոյ, համագոյակ, համագումար, համադաս, հո-մադասակից, համադրություն, համաժողով, համալսարան, համախմբել և այլն:

Տոս նախածանցի համապատասխան, համ-ով թարգմանվել են՝ համագործություն, համա-կարգել, համակարգություն, համաձայն, համաշափ, համաշափություն և այլն: Որոշ բառերում համ-ը համապատասխանել է թե՛ ομο, թե՛ συ նախածանցներին. օր.՝ համարակից, համ-ազգի, համաձայն, համաձայնակից և այլն:

Հոմ-ով թարգմանվել են՝ հոմարուն, հոմազաւառ, հոմազոյ, հոմազգի, հոմասեռ, հոմասեր, հոմատեսակ, հոմատոհմ, հոմարին, հոմբրամ:

Քերականական տերմիններ՝ հոմ-անուն (ὁμο-ωνυμῶν), հոմ-անունաբար, հոմ-անունակի (ὁμο-ωνύμας), հոմ-անունություն (ὁμο-ωνυμία):

ՄԱԿ-. Դասական հայերենում չի հանդիպում: Հունարան դպրոցի շատ սովորական նախ-ածանցներից է՝ «վրա, վրան» նշանակությամբ, համապատասխան հունարեն ἐπι մակրայ-նախդիր-նախածանցի: Հանդիպում է նաև մազ ձևով՝ «կրկին, երկու» նշանակությամբ: Հոմա-նիշ՝ վեր-:

Մակ-ը հունարենի հետևողությամբ գործածվել է նաև որպես նախադրություն սեռական հո-լովի հետ (սմակ այլոց ստորոգել, սմակ այլոյ ուրուք) և իբրև մակրայ Վրան, ղեպի վերս նշանակությամբ (սմակ յերկին հայելով)¹⁴:

Եւ-ն որպես մակրայ նշանակում է՝ 1. վերից, վերում, վերև, 2. այն ժամանակ, 3. նույնպես, այնուհետև, բացի դրանից:

Որպես նախդիր սեռական, տրական և հայցական հոլովների հետ արտահայտում է 1. տեղ Վրա, մոտ, 2. ուղղություն Վրա, ղեպի, ընդդեմ, 3. հաջորդականություն և այլն:

Որպես նախածանց ցույց է տալիս 1. մի քանի վրա մնալը, ապրելը, գտնվելը, 2. շարժում մի բանի, մեկի դեմ, 3. հավելում:

¹⁴ Տե՛ս ՆՃԲ, հտ. 2-րդ, Վենետիկ, 1837, էջ 190:

Մակ-ով կազմվել են՝ մակագրեմ, մակագրութիւն, մակադիտող, մակադրական, մակադրեմ, մակագրութիւն, մակալեզու, մականուանական, մականունութիւն, մակատեսուչ, մակարդակ, մակերևոյթ և այլն:

Քերականական տերմիններ՝ մակ-աւ-դրական, մակ-դիր (επι-θετον), մակ-անուն (επ-ωνυσον), մակ-աւասար (επι-χοινον), մակ-բայ (επι-ρρημα), մակ-բաշխ (επι-μεριζομενον), մակ-բեր (επι-πορα), մակ-աղկապել (επι-συνδεω):

ՅԱՐ-ը. Արմատ, որը դասական հայերենում ունեցել է «կից, կցված, միացած», «իրար նման», «հարմար, համապատասխան», «միշտ, անդադար, շարունակ» նշանակութիւնները և նորանով կազմվել են ածանցավոր ու բարդ բառեր: Գործածվել է նաև որպես ածական, նախադրութիւն, մակբայ:

Հունարան դպրոցի ներկայացուցիչները յաճ-ը գործածել են որպես նախածանց, պահպանելով «միշտ, անդադար, անընդհատ» և «մոտը, քովը, կից» նշանակութիւնները, համապատասխան հուն. παρ, παρ-, նաև επι, συ, προ, δε: նախդիր-նախածանցների: Հոմանիշ՝ ՔԱՂ-, ՓԱՂ-, ԵԱՂ-, ԵՂՐ-:

Նույն նշանակութիւններով յար-ը գործածվել է նաև որպես նախադրութիւն («յարանուն է, որ յար յանուն ինչ քերթոցեալ է»։ Քր. Բեբ.) և մակբայ («յար աճեցեալ յօրանան»։ Պիտ.):

Սաբա-ն որպես մակբայ նշանակում է «մոտ, մոտիկ, կողքին, առընթեր»:

Որպես նախդիր՝ սեռ. և հայց. հոլովների հետ արտահայտում է հետևյալ իմաստները. 1. կողմից, մոտից (միայն անձ ցույց տվող բառերի մոտ), 2. դադարում, 3. տեղ մոտ»:

Որպես նախածանց արտահայտում է 1. անմիջական մոտիկութիւն, կցվածութիւն, 2. շար-ժում մոտով, կողքից:

Յաւ- նախածանցի հիմնական նշանակութիւններն են, ինչպես նշեցինք, «միշտ» և «կից», երբեմն նաև՝ «նման» և «միասին»:

Յաւ-ով թարգմանվել ու կազմվել են «միշտ» նշանակությամբ՝ յարարաց, յարարուղիս. յարակաց, յարակէզ, յարահողով, յարաշարժ, յարատև և այլն: «կից» նշանակությամբ՝ յարադրեմ, յարադրութիւն, յարակայիմ, յարակարգեմ, յարակարգութիւն: «նման» նշանակությամբ՝ յարակիր, յարացոյց, յարացուցական և այլն: «Միասին» նշանակությամբ՝ յարառնում, յարառոցեմ, յարառում և այլն: Վերոհիշյալ բառերի համարժեքները հունարենում կազմված են παρ- նախածանցով:

Սական, կան նաև բառեր. որոնց մեջ յաւ-ը համապատասխանում է սոս- կամ սւա- երբեմն՝ և՛ παρ-, և՛ συ-, կամ միաժամանակ՝ παρ-, συ-. επι-, երբեմն՝ παρ-, συ-, սւա-, προ-, կամ՝ παρ-, συ-, δε, επι- նախածանցներին:

Եաւ-ը սոս- նախածանցին համապատասխանում է՝ յարալէզ, յարակից, յարընթաց և, այլ բառերում:

Եար-ը παρ-, συ-, սւա-, προ- նախածանցներին՝ յարաձգեմ (παρ-τεινω, συ-τεινω, δε-τεινω, προ-τεινω), յարաձգութիւն, յարաձգական բառերում:

Քերականական տերմիններ՝ յար-ա-բարդ (παρ-συνθετον), յար-ա-կայ, յար-ա-կայական (παρ-κειμενος, παρ-στατικός), յար-ա-ձգական, յար-ա-ձիգ (παρ-τατικός), յար-սնուն (παρ-ωνυσον), յար-ա-շեշտ, յար-ա-շեշտող (παρ-οξύτονον), յար-ա-պարույկ (προ-περισπομενον):

ՆԱԽ-ը. Արմատ, որը դասական հայերենում գործածվել է որպես մակբայ «առաջ, առաջուց, կանխով, առաջինը ըստ ժամանակի կամ կարգի» և ածական «առաջին, զխավոր, նախկին, հին» նշանակութիւններով: Դասական հայերենում այս արմատով կազմվել են բազմաթիւ ածանցավոր ու բարդ բառեր: Հունարան դպրոցի ներկայացուցիչներն այս արմատը գործածել են որպես մակբայ և նախածանց նույն նշանակութիւններով. հոմանիշ՝ ՎԱՂ-. համարժեք է հուն. προ մակբայ-նախդիր-նախածանցին:

Սո-ն որպես մակբայ նշանակում է՝ 1. առջևից, առաջուց, 2. դեպի առաջ, 3. առաջ, նախ. 4. վաղաժամ:

Որպես նախդիր սեռական հոլովի հետ ցույց է տալիս 1. տեղ առջևից, 2. ժամանակ՝ «մեկից, մի բանից առաջ», 3. անունից, 4. փոխարեն, 5. համար և այլն:

Որպես նախածանց՝ 1. առաջ, առջևից, 2. առավելապես, գերադասելով, 3. մինչև, 4. նախապես, առաջուց:

Նախ-ը եղել է հունարան դպրոցի ամենաշատ գործածական նախածանցներից մեկը:

Այս նախածանցով կազմվել են՝ նախագէտ, նախագիծ, նախագիտակ, նախադաս, նախազատութիւն, նախազգեմ, նախաժամանեմ, նախահայր, նախահանդիպում, նախահաւ, նախամեծար, նախալարձակ, նախընտիր և այլն:

Տեղեկագիր 11—6

Քերականական տերմիններ՝ նախ-ա-զաղափուր (προ-ζαχαφουρ), նախ-ա-դասեմ, նախ-ա-դասեալ (προ-ζασαμενος), նախ-ա-դասական, նախ-ա-դրեալ (προ-τιθμεν), նախ-ա-դիր, նախ-ա-դրուր (προ-θεις), նախ-ա-յարաշեշու, նախ-ա-յարաշեշտուր (προ-παροζυτονον), նախ-ա-պարոյկ (προ-περιπαμενον) և այլն:

Ներ-. Դասական հայերենում այս արմատը հանդիպում է ի ներ-ք-ս «ներքը», ներ-հուս ի ներ-հուստ «միջից, ներսից, ներքևից, ցածից», ներ-հ-ին «միջի, ներսի, ցածի, ստորին» բառերում, առանձին անգործածական է եղել:

Հունարան դպրոցի ներկայացուցիչները ներ արմատը գործածել են որպես նախածանց «ներս, մեջ, խորք (դեմ, մոծել)» նշանակությամբ, համապատասխան հուն. εν նախդիր-նախածանցի, Հակասիշ՝ ԱՐՏ-:

Այս դպրոցի կողմից ներ-ը գործածվել է նաև որպես նախդիր՝ տրական, բացառական և ներդրական հոլովների կազմության համար («ներ տեղից», «ներ ի տան», «ներ արհեստիս» Թր. Ներ., «ներ սոջա», «ներ նոջա» Պերիարմ.):

Են նախդիր տրական հոլովի հետ արտահայտում է 1. ներդրական հոլովի իմաստ մեջը, ներսը, վրան, մոտ, միջև, 2. գործողության կատարման ժամանակը, 3. դրություն, վիճակ, որպես նախածանց՝ 1. մեջ, ներս, դեպի ներս, ներսում, 2. որևէ հատկանիշ ունենալը:

Ներ-ը նույնպես եղել է ամենակենսունակ նախածանցներից մեկը: Ներ-ով կազմվել են՝ ներազգի, ներածական, ներածեմ, ներածություն, ներբող, ներբողական, ներբողեմ, ներգոյ, ներգործում, ներգործուն, ներդաշնակություն և այլն:

Քերականական տերմիններ՝ ներ-գործական (εν-εργητικός), ներ-գործութիւն (εν-εργεια), ներ-գործել (εν-εργεω), ներ-կայ (εν-εστω), ներ-խոնարհութիւն (εγ-χλεις), ներ-պարտաւել (εμ-περιελτφω), ներ-բակառեալ (εμ-περιελτμενον) և այլն:

ՆԱՂ-. Դասական հայերենի արմատ «կապ, զոդ, կցում, կապակցություն» նշանակությամբ, առանձին անգործածական: Հունարան դպրոցի ներկայացուցիչներն այն գործածել են որպես նախածանց, հոմանիշ՝ ՌԱՂ-, ՓԱՂ-, ՇԱՂ-, ՅԱՂ-, ԲԱՂ-, ՓԱՂ-, ՀԱՄ- նախածանցների, համապատասխան հուն. συν (սո), սոյ, սոյա նախդիր-նախածանցի: Հմմտ. ՌԱՂ- (սոյ) նախածանցը:

Շաղ-ով թարգմանվել ու կազմվել են՝ շաղաշարություն, շաղեմ, շաղկապականություն, շաղկապակցեմ, շաղկապություն, շաղկապում և այլն:

Քերականական տերմիններ՝ շաղ-ա-շար (սոլ-λσϛϛ), շաղ-ա-շարել, շաղ-ա-ռակ (սոլ-λϛϛϛ), շաղ-կապ (սոյ-δεσμε), շաղ-կապական, շաղ-կապել (սոյ-δεω) և այլն:

ՇԱՂ-. Արմատ, որը դասական հայերենում ունիցել է «շարվածք, կարգ», «խոսքի շարակարգություն, շարադասություն», «խումբ, բաղմություն» նշանակությունները: Հունարան հայերենում այն գործածվել է որպես նախածանց, հոմանիշ՝ ՌԱՂ-, ՓԱՂ-, ՇԱՂ-, ԲԱՂ-, ՓԱՂ-, ՅԱՂ-, ՀԱՄ-, համապատասխան հուն. συν նախդիր-նախածանցի, Հմմտ. ՌԱՂ-:

Շար-ով թարգմանվել ու կազմվել են՝ շարագրեմ, շարագրում, շարադասություն, շարադրական, շարադրեմ, շարած, շարակարգություն, շարակցեմ, շարահիս, շարահիսեմ, շարաձայնություն, շարունակ, շարունակական, շարունակել և այլն:

Քերականական տերմիններ՝ շար-ա-գիր, շար-ա-գրած, շար-ա-գրութիւն (σϛγ-γραμμα, սոյ-γρσϛϛ), շար-ա-դասել, շար-ա-կածել, շար-ա-կարգել (սոյ-ταστω, -τω), շար-ա-դասութիւն (սոյ-ταξις) շար-ա-ղրել (սոյ-τιθημι, սոյ-χρνω), շար-ա-դրութիւն (սոյ-θεις), շար-ա-ձայն (սոյ-φωνον):

ՊԱՂ-. Դասական հայերենի արմատ «շուրջ, շրջան» նշանակությամբ, որից առաջացել են իմաստային տարբեր առումներ. 1. պար, խաղ, 2. բաղմություն, խումբ, 3. աստղերի հույլ և նրանց շարժումը, 4. մեղունների խումբ, 5. իրերի շարք:

Հունարան դպրոցի կողմից պաղ-ը գործածվել է որպես նախածանց «շուրջը» իմաստով, հոմանիշ՝ ՌԱՂ-, ՓԱՂ-, համապատասխան հուն. περι. երբեմն շարժ մակրայ-նախդիր-նախածանցների:

Սեր-ն որպես մակրայ նշանակում է «շուրջը, շուրջանակի» որպես նախդիր՝ սեռական, տրական և հայցական հոլովների հետ արտահայտում է. 1. տեղ «շուրջը», «մոտը, կողքին», 2. մոտավոր ժամանակը «մոտավորապես, շուրջ», 3. մոտավոր թիվ, չափ «շուրջ» և այլն:

Որպես նախածանց նշանակում է՝ 1. շուրջը, մոտ, վեր, 2. բարձր, լիովին, շատ:

Պար-ով կազմվել են՝ պարաբոհեմ, պարաբերել, պարաբերություն, պարագայ, պարագայություն, պարագիծ, պարածածկեմ, պարահայիմ և այլն:

Մերականական տերմիններ՝ պար-առուրիւն (περί-λτφււս, αὐλ-λτφւս), պար-բեկութիւն (περί-βλσւս), պար-ոյկ (περί-σπώμενος), յար-ա-պար-ոյկ, նախ-ա-պար-ոյկ (προ-περί-σπώμενος), պար-ուկանայ, պար-ուկիլ:

ՍՏՈՐ-։ Արմատ, որը դասական հայերենում գործածվել է ստակը, ներքեր, ցած, վայր-նշանակութեամբ։ Այս արմատից կազմվել են՝ ստորին, ստորոտ և այլն:

Հունարան դպրոցի ներկայացուցիչներն այն կիրառել են որպես մակբայ և նախածանց, հոմանիշ՝ Ենթ- և Ընդ- նախածանցների, համապատասխան հուն. ὑπο և ὑπὲρ մակբայ-նախդիր-նախածանցների: Հականիշ՝ Վեր-։ Հմտ. Ենթ- (υπο):

Կաշա նախդիր սեռական և հայցական հոլովների հետ արտահայտում է. 1. այն տեղը, դեպի ուր ուղղվում է գործողությունը՝ «վերևից ներքև», 2. այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը՝ «մեջ, տակ», 3. ժամանակ և այլն:

Որպես նախածանց նշանակում է՝ 1. ուղղություն վերևից ներքև, տակը, 2. լրիվ, ամբողջովին:

Ստոր- նախածանցով (υπο-ի համապատասխան) թարգմանվել ու կազմվել են՝ ստորաբնակ, ստորագրեմ, ստորագրություն, ստորադրական, ստորադրեալ, ստորակայ, ստորակայություն, ստորաբարձ և այլն:

Կաշա նախածանցի համապատասխան՝ ստորահոսեմ, ստորանկիմ, ստորերկրեայ, ստորեւ, ստորոգեալ, ստորոգելի և այլն:

Քերականական տերմիններ՝ ստոր-ա-դաս (p.i. ստոր-ա-դասական (υπο-ταχτικός), ստորասեմ (υπο-τασσω), ստոր-ա-դասութիւն (υπο-ταξίς), ստոր-ա-դիր, ստոր-ա-դրութիւն (υπο-θέσις), ստոր-ա-կիւտ (υπο-στέιγμη), ստոր-աւո (υπο-διαστολή):

ՎԱՎ-։ Արմատ, որը դասական հայերենում գործածվել է որպես մակբայ՝ 1. կանուխ, շուտով, վաղուց, առաջ, 2. հաջորդ առավոտ կանուխ, և որպես ածական՝ «հին, նախկին, վաղեմի» նշանակություններով: Գործածվել է նաև որպես բարդության կամ ածանցման բաղադրիչ տարր. ինչպես՝ վաղաթառամ, վաղահաս, վաղափուլ և այլն:

Հունարան դպրոցի ներկայացուցիչներն այն գործածել են իբրև մակբայ և նախածանց, պահպանելով իր նշանակությունները: Հոմանիշ է ՆԱԽ-, համապատասխան հուն. πρό նախդիր-նախածանցին, Հմտ. ՆԱԽ- (προ):

Վաղ-ով կազմվել են՝ վաղաբարձ, վաղագրաւ, վաղակարծ, վաղամահ, վաղահագ, վաղանցուկ, վաղեմի, վաղնջուց, վաղորդայն, վաղորդեան և այլն:

Քերականական տերմիններ՝ վաղ-ա-դասական (προ-ταχτικός), վաղ-ա-կատար, վաղ-ա-կատարական (զեր-ակատար -υπερ-συντελεχον), վաղ-մամանակեան և այլն:

ՎԵՐ-։ Դասական հայերենում այս արմատը սովորաբար գործածվել է նախդիրով՝ ի վեր, ի վերայ, ի վերոյ, ի վերուստ «վեր, վերև, վրա» և «վերստին, նորից» նշանակություններով: հանդիպում է նաև իբրև նախածանց «վերը, վրան, բարձր» նշանակությամբ՝ վերակացու, վերարկու, վերամբարձ, վերանալ և այլն:

Հունարան հայերենում այս նախածանցը կիրառվել է առավելապես «վերստին, կրկին» նշանակությամբ: Հոմանիշ՝ Գեր-, ՄԱԿ-։ համապատասխան հուն. ἀνα, երբեմն նաև՝ ἐπι և ὑπερ մակբայ-նախդիր-նախածանցների: Հականիշ՝ ՍՏՈՐ-:

Վաղ-ն որպես մակբայ նշանակում է՝ 1. վերևում, վերև, վերևից, 2. վեր, դեպի վեր: Որպես նախդիր սեռական, տրական և հայցական հոլովների հետ ցույց է տալիս. 1. գործողության ուղղությունը դեպի վեր, 2. այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը. «վրա, վերև, մեջ», 3. ժամանակ «ընթացքում» և այլն:

Իբրև նախածանց արտահայտում է. 1. ուղղություն դեպի վեր, 2. ուժղնություն, ուժեղացում, 3. կրկնություն, 4. հետադարձ գործողություն:

Վեր- (αντ) նախածանցով թարգմանվել ու կազմվել են՝ վերաբերական, վերաբերություն, վերադրեմ, վերադրություն, վերադարձ, վերածեմ, վերածնություն, վերլուծություն և այլն: Որոշ բառերում վեր-ը համապատասխանել է հուն. ἐπι նախածանցին. օր.՝ վերագիր, վերադէտ, վերադիտող, վերադիր, վերադրություն, վերատեսուչ, վերնագիր և այլն: Որոշ բառերում՝ ὑπερ նախածանցին. օր.՝ վերադրություն, վերակայ, վերնատուն: Որոշ բառերում՝ αντ և ἐπι կամ ἀνα և ὑπερ, կամ՝ αντ, ἐπι, ὑπερ, δια. օր.՝ αντ-θεσις, ἐπι-θεσις, ὑπερ-θεσις -վեր-ագրու-թիւն, αντ-ἐμπεω, ἐπι-πεμπεω, δια-πεμπεω- վեր-առաքեմ և այլն:

Քերականական տերմիններ՝ վեր-բերական (αντ-φορισος), վեր-ծանեմ (αντ-γινωσχω), վեր-ծանող (αντ-γινωστης), վեր-ծանութիւն (αντ-γινωσις), վեր-սատուրիւն (αντ-τασις), վեր-նարայ (αντ-ρρημα):

ՏԱՐ- Արմատ, որը դասական հայերենում ունեցել է 1. օտար, հեռու, հեռավոր, 2. բացի, դուրս, զատ և 3. ժխտական՝ չ, ապա նախածանցների նշանակությունը:

Հունարան դպրոցի ներկայացուցիչները տաՐ-ը գործածել են իբրև նախածանց, ընդհանրացնելով նրա երկրորդ նշանակությունը: Հոմանիշ՝ ԲԱՅ-, ԱՊ-, համապատասխանում է հուն. ἵππο, εχ, ες, παρ, δεα նախդիր-նախածանցներին:

Տար- նախածանցով կազմվել են՝ տարաբաժին, տարազնաց, տարածական, տարածն և այլն:

Δια-ին համապատասխան՝ տարածայնություն, տարրերումն, տարրորոշումն և այլն:

Απο-ին համապատասխան՝ տարաբնակություն, տարակուսական, տարակուսանք և այլն:

Παρα-ին համապատասխան՝ տարալսություն, տարածիզ, տարապատկան և այլն:

Քերականական տերմիններ՝ տար-բաղմաու (παρ-συναπτως) տար-ա-կուսական(ք) (απο-ρρηματικοί):

ՏՐԱՄ- Դասական հայերենում եղել է արմատական բառ թամուր, պինդ, հաստատուն, շշոր, կարծր, պնդացած (գետին)», «հողի կարծր երես» իմաստներով:

Հունարան դպրոցի ներկայացուցիչներն այն գործածել են իբրև նախածանց «միջով, մի կողմից մինչև մյուսը, ծայրից ծայր, այս ու այն կողմ, կամ երկու կողմին վերաբերող» նշանակություններով, համապատասխան հունարեն δεα նախդիր-նախածանցի:

Δια նախդիրը սեռական և հայցական հոլովների հետ ցույց է տալիս 1. այն տեղը կամ առարկան, որի միջով, վրայով անցնում է գործողությունը, 2. ժամանակ, 3. պատճառ, հետևվանք, 4. վերաբերություն, 5. մեկի, մի բանի «միջոցով»:

Որպես նախածանց արտահայտում է 1. թափանցում, 2. բաշխող գործողություն, 3. բաժանում, 4. փոխադարձություն:

Տրամ-ով կազմվել են՝ տրամարան(քն), տրամարանեմ, տրամաբանություն, տրամազիծ, տրամադրություն, տրամատական, տրամատեմ, տրամատություն, տրամորոշություն և այլն:

Քերականական տերմիններ՝ տրամ-ա-դրուբից (δια-θεσις), տրամ-ա-խոհութիւն (δια-νοια, δια-νοησις, δια-νοητα):

ՓԱՂ- Տե՛ս ԲԱՂ- նախածանցը: Առաջացել է բաղ արմատից՝ բ և փ տառերի հերթափոխությամբ, որը հավանաբար թարգմանչի բարբառի ազդեցության արդյունք է¹⁵:

Փաղ-ով կազմվել են՝ փաղազան, փաղակատարական, փաղակերպ, փաղասեռ, փաղեմ և այլն:

Քերականական տերմիններ՝ փաղ-անուն (սսν-ώνυμον), փաղ-անունաբար, փաղ-անունակի, փաղ-անունապէս (սսν-ωνυμως), փաղ-առ, փաղ-առութիւն (սսλ-λαβή), փաղ-առական, փաղ-առնական, փաղ-առել:

ՓԱՐ- Տե՛ս ՊԱՐ- նախածանցը: Փար-ով թարգմանվել են՝ փարաբառնալ, փարաբարձություն, փարագրական, փարադրեմ, փարադրություն և այլն:

ՓՈԽ- Արմատ «փոխել, փոփոխել» բայի: Հունարան հայերենում կիրառվել է իբրև նախածանց «փոխանակ, փոխարեն» նշանակությամբ: Հոմանիշ՝ ԴՆՐ- համարժեք՝ հուն. αντι- մանավանդ՝ μετ-α մակրայ-նախդիր-նախածանցի:

Փոխ-ով αντι- նախածանցին համապատասխան թարգմանվել ու կազմվել են՝ փոխադարձ, փոխադարձաբար, փոխադարձեմ, փոխադարձություն, փոխադրություն և այլն:

Քերականական տերմիններ՝ փոխ-անուն, փոխ-անունութիւն (αντ-ωνυμία), փոխ-անունաբար (παρ-ωνυμως):

Փոխ-ով μετ-α- նախածանցին համապատասխան կազմվել են՝ փոխարեւում, փոխարեւություն, փոխադրեմ, փոխադրություն, փոխակերպություն, փոխանցեմ, փոխարկումն և այլն:

Հունարան դպրոցի ներկայացուցիչները քերականական տերմիններ են կազմել նաև շատ սակավ գործածական հետևյալ նախածանցներով:

ԲԱԿ- Դասական հայերենի արմատ, որը նշանակել է 1. տան շուրջը եղած բաց տեղ՝ ցանկապատված կամ պարսպապատած, 2. ոչխարների փարախ, 3. լուսնի, լուսատուների շուրջը պատող ծիր, 4. արեգակի գոնդը: Այս արմատով կազմվել են թրակ ունել, բակ առնուլ, բակ արկանել՝ հարադիր բայելը շրջապատել՝ նշանակությամբ: Այստեղից հունարան դպրոցի ներկայացուցիչները բակ-ը գործածել են որպես նախածանց՝ շուրջը՝ իմաստով, իբրև հոմանիշ՝ ՊԱՐ-, ՓԱՐ- նախածանցների, համապատասխան հուն. περι նախդիր-նախածանցի:

¹⁵ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Քերականական և ուղղագրական ուղղանությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 75:

Բակ- նախածանցով կազմվել են՝ բակաուարար, բակաոեմ, բակաոեալ(բ), բակձած, բակ-
ձածարար, բակձածեմ, բակձածումն և այլն:

Քերականական տերմինի՝ բակ-առական կամ բակ-ծածական (περι-λειτουργος, συλ-λη-τικός),
ισοին- Դասական հայերենի արմատ քրիշ, փորր ինշ, սակավ, սուղ, շնչին» նշանակու-
թյամբ: Հանդիպում է նաև խուն ինշ, խուն մի ձևերով:

Հունարան գրությունքի ներկայացուցիչները խում-ը դիտել են իրրև նախածանց, հոմանիշ՝
հնթ-, ՍՏՈՐ- նախածանցներին և կազմել խուն-երդմեական (χατ-ωμοτικός) քերականա-
կան տերմինը:

— ԿԻՑ. Դասական հայերենի արմատ 1. «մոտ, կպած, կցված», 2. «միասին, միարան»,
3. «ճանապարհների միացած տեղը» նշանակություններով: Այս արմատից կազմվել են՝ կցել,
կցկցել, կցորդ, կցորդութիւն, կցված և այլն- Կից-ը գործածվել է նաև որպես բարդության
երկրորդ բաղադրիչ՝ «կցորդ, ընկեր, միասին կամ նույն բանն ունենալը» նշանակությամբ, ինչ-
պես գործակից, ժամանակակից, լծակից, կենակից:

Հունարան գրությունքի ներկայացուցիչները կից-ը դիտել են որպես «ստորագրած» նախադրու-
թյուն կամ վերջածանց, հոմանիշ՝ ԲԱՂ-, ՓԱՂ-, ՇԱՂ-, ՇԱՐ-, ՋՈԿ-, ՀԱՄ-, համարժեք հոմ-
տսւ- նախածանցի:

— Կից վերջածանցով կազմված քերականական տերմիններ են՝ բարբառ-ա-կից, ծայն-ա-
կից (σύμ-φωνον), բմ-ա-կից:

ՄԱՏ- Երմատ, որը դասական հայերենում ունեցել է «մոտ կամ առաջ երթալ» տանել,
նշանակությունը: Առանձին ածականական է եղել, բայց բայակերտ տարբեր ածանցներով
կազմվել են՝ մատում, մատում, մատշմ, մատուցանեմ, այստեղից՝ ածանցավոր և բարդ բա-
ռեր՝ մատուցիչ, դժվարամատուց, յառուջամատուց և այլն:

Դ. Քրականացու քերականության հայ թարգմանիչը մատ-ը համարել է նախածանց «մոտը»,
րովը» նշանակությամբ, համապատասխան հուն. πασα նախդիր-նախածանցի և կազմել սաա-
առկայ (παρα-βόλῃ), մատ-հրաման (παρα-χέλευσις) քերականական տերմինները:

ՋՈԿ- Դասական հայերենում արմատական բառ «խումբ» նշանակությամբ: Հունարան
գրությունքի ներկայացուցիչներն այն համարել են նախածանց, հոմանիշ՝ ԲԱՂ-, ՓԱՂ-, ՇԱՂ-
ՇԱՐ-, ՅԱՐ-, ԿԻՑ, համապատասխան հուն. συν նախդիր-նախածանցի:

Ջոկ-ով կազմվել են՝ ջոկադասակարգութիւն, ջոկանամ, ջոկատ, ջոկարան, ջոկել:

Քերականական տերմիններ՝ ջոկ-ա-դիւ(բ) (συν-θετος), ջոկ-ա-դիւեմ (συν-τι-θημι), ջոկ-
ա-ման (συν-πλεχτικός), ջոկ-ա-մանել (συν-πλέχω):

ՔՈՂ (ՔՈՂ)- Երմատ ածականաց, երեսն ծածկոց, պատրվակ» նշանակությամբ: Դասա-
կան հայերենում նրանով կազմվել են ածանցավոր և բարդ բառեր. օր.՝ քողարկեմ, քողաձիգ,
քողընկեց: Հունարան հայերենում այն դիտվել է իրրև նախածանց շուրջը ծածկել» կամ «երկու
բանի միջև սղել» նշանակությամբ, համապատասխան հուն. πρῶς մակրայ-նախդիր-նախա-
ծանցի:

Քող-ով կազմվել են՝ քողալորր, քողաբորբեալ, քողազարդ, քողաթեալ, քողածածուկ,
քողանոց, քողարկութիւն, քողավոր, քողումն:

Տողալսփական տերմիններ՝ քող-աղատ (αμφι-βραχυσ), քող-ա-բորբ (αμφι-μακρος):

Հանրադոմարի բերելով ասվածը, կարելի է անել հետևյալ բնորոշումը եզրակացություն-
ները:

1. Մեծ է հունարան գրությունքի ստեղծած նախածանցների զերրը ընդհանրապես հայերենի բա-
ռապաշարի հարստացման, մասնավորապես՝ հայերենի գիտական, այդ թվում քերականական
տերմինաբանության ստեղծման զործում: Այդ նախածանցներով ստեղծված բազմաթիվ բառեր
ու տերմիններ հաստատուն կերպով մտել են հայերենի բառային հիմնական ֆոնդի մեջ:

2. Նախածանցների կազմության զլխավոր աղբյուրը ծառայել է դասական հայերենը. «զ-
տազործվել են՝

ա. դասական հայերենի նախդիրներ (առ, ըստ, ընդ), մակրայներ (նախ, վաղ, յար, ստոր).
մակրայական ծագում ունեցող արմատներ (արտ, բաց, ներ, վեր):

բ. դասական հայերենի արմատներ (բաղ, զեր, հակ, մատ, շաղ, շար, պար, տրամ, փող):

գ. դասական հայերենի արմատներ, որոնք հնչյունական կամ իմաստային որոշ փոփոխու-
թյուն են կրել. օր.՝ ենթ<ընդ, հոմ<համ, փաղ<բաղ, փար<պար: Իմաստային տեսակե-
տից, օր.՝ շաղ «կապ, զոդ, կցում» արմատը իրրև նախածանց՝ ստացել է «կից», շաղ «շարվածք,
կարգ» և «խումբ, բազմություն» արմատը՝ նույնպես «կից» նշանակությամբ և այլն:

3. Հունարան դպրոցի ստեղծած նախածանցները, մեծ մասամբ, հունարենի նախդիր-նախածանցների իմաստային, երբեմն՝ նույնիսկ հնչյունական պատճենումներ են:

4. Հայերենի նախածանցները, բացի իրենց հիմնական իմաստից, ստեղծված լինելով իրեն համարժեքներ հունարենի նախդիր-նախածանցների, արտահայտում են նաև նրանց բազմիմաստությունը: Ուշագրավ է, որ հայերեն նույն նախածանցը համապատասխանում է հունարեն մի քանի նախածանցների, որոնք հարաբերական հոմանիշներ լինելով հանդերձ, ունեն նաև իրենց իմաստային տարբերությունները. օր. առ — προς, προς, επι, բաց — απο, εκ, յար — παρ, συ պար — περι, αμφι, վեր — ανα, επι, υπερα:

5. Նկատելի է նաև հակառակ երևույթը, որ հունարեն նույն նախածանցի դիմաց հայերենում ստեղծվել են մի քանի հոմանիշներ. օր.՝ απο — ապ, բաց, տար, արտ, αντι — հակ, դեր, փոխ, δια — տար, տրամ, επι — մակ, վեր, υπε — ենթ, ստոր:

6. Նախածանցներ կան, որոնք արտահայտում են հականիշ իմաստ. օր.՝ առ — բաց, արտ — ներ, ստոր — վեր, հակ — համ և այլն:

7. Նախածանցներն ըստ կազմության պարզ են: Նրանք ծառայել են կազմելու կցական բարդություններ: Պետք է նշել, սակայն, որ հունարան դպրոցի ներկայացուցիչները երբեմն խախտել են հայերենի բարդության բաղադրիչ մասերի հարաբերությունը, որն ընդհանրապես ստորադասական է, կիրառելով բարդության մասերի հունարենի շարահյուսական հարաբերությունը. այսպիսով, բարդության 2-րդ բաղադրիչն ըստ իմաստի դարձել է առաջինի լրացում, փոխանակ հակառակը լինելու. օր.՝ դեր-անուն՝ անվան փոխարեն (դրված), մակ-բայ՝ բայի վրա (դրվող) և այլն:

8. Հունարան դպրոցի ստեղծած նախածանցների մեծ մասը կազմված լինելով այս դպրոցի նազույն չըջանում, հետագայում նույն ուղղության համար ունեցել են նորմավորող նշանակություն:

9. Հունարան դպրոցի ստեղծած նախածանցներից շատերը կայունացել են իրեն մեր լեզվի բառակազմական նախածանցներ, դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը և այսօր էլ ակտիվ կերպով մասնակցում են հայերենի բառակազմության, մանավանդ՝ գիտական տերմինաբանության ստեղծման գործին:

А. Н. Мурадян

ПРИСТАВКИ, СОЗДАННЫЕ ГРЕКОФИЛЬСКОЙ ШКОЛОЙ

Р е з ю м е

В середине V века, в период научных переводов с греческого языка, с целью дать языку научную точность, представители грекофильской школы создали множество армянских приставок, аналогичных греческим.

В настоящей статье рассматриваются наиболее употребляемые и устойчивые приставки, созданные грекофильской школой, которые сыграли важную роль как в расширении словообразовательных возможностей, так и в создании научной, особенно, грамматической терминологии армянского языка.

На основе разбора каждой приставки, в конце даются некоторые выводы о семасиологических, морфологических и словообразовательных особенностях приставок.